



Support for Improvement in Governance and Management

A joint initiative of the OECD and the EU, principally financed by the EU

Կարճ գրություն 23

Մեատեմբեռ 2011

Պետական գնումներ

Ռազմական ոլորտի գնումներ

CONTENTS ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ռազմական ոլորտի գնումների հասկացությունը
- Ռազմական ոլորտի գնումների առանձնահատուկ հատկանիշները
- Ռազմական ոլորտի գնումները Եվրոպական Միությունում
- Կարգավորիչ շրջանակը. ԵՄ Առաջնային օրենսդրություն-Ընդհանուր կանոններ և սկզբունքներ
- Կարգավորիչ շրջանակը. ԵՄ Երկրորդային օրենսդրություն-Ռազմական և անվտանգության ոլորտի Հրահանգը
- Այլ հարցեր (Փոխադարձ գործողություններ, զուգահեռ մեթոդներ)
- Ռազմական ոլորտի գնումներ. ԵՄ-Երրորդ երկրներ



www.sigmaweb.org

This document has been produced with the financial assistance of the European Union. The views expressed herein can in no way be taken to reflect the official opinion of the European Union, and do not necessarily reflect the views of the OECD and its member countries or of beneficiary countries participating in the SIGMA programme.

Ներածություն-Ռազմական ոլորտի գնումների հասկացությունը

Ռազմական ոլորտի գնումները գործընթաց են, որի միջոցով ռազմական ոլորտի մարմինները ձեռք են բերում զանազան ապրանքներ, ծառայություններ, որոնք անհրաժեշտ են նրանց՝ իրենց պարտականությունները և առաքելությունները կատարելու համար: Օրինակ, այս մարմինները ձեռք են բերում գրենական պիտույքներ և SS սարքավորումներ՝ վարչական պարտականությունները կատարելու համար, սնունդ՝ զինվորների համար, մաքրման ծառայություններ՝ իրենց տարածքների համար, սուզանավեր, ռեակտիվ կործանիչներ, զրահապատ մեքենաներ, ռազմական սպառազինություն, հրթիռներ և ռազմական այլ նյութեր՝ ազգային անվտանգության, տարածքային ամբողջականության պաշտպանության և միջազգային այլ պարտավորությունների կատարման համար, օրինակ, արտասահմանում խաղաղապահ գործունեությանը մասնակցելու համար. նրանք նաև գնում են համապատասխան պահպանման ծառայություններ՝ ռազմական նյութերը գործողության համար շարունակական և անընդհատ ձևով պատրաստ պահելու համար:

Չնայած ռազմական ոլորտի գնման պաշտոնական սահմանում չկա, այն հավանաբար կարող է սահմանվել *լայն* և *նեղ* առումներով:

Լայն առումով սահմանված ռազմական ոլորտի գնումներն ընդգրկում են ռազմական ոլորտում գործող պետական պատվիրատուի կողմից իրականացված *ցանկացած* գնում: Այս իմաստով ռազմական ոլորտի գնումների հասկացությունն ընդգրկում է վերոնշյալ *բոլոր* օրինակները. գրենական պիտույքների, SS սարքավորումների, ուղղաթիռների, սուզանավերի և այլնի գնում:

Ռազմական ոլորտի *նեղ սահմանում* ընդգրկում է միայն ապրանքները և ծառայությունները, որոնք *արտադրվել* կամ նախատեսվել են *բացառապես ռազմական նպատակներով օգտագործելու* համար, մասնավորապես, օգտագործելով վերոնշյալ օրինակները, սուզանավեր, ռեակտիվ կործանիչներ, զրահապատ մեքենաներ, ռազմական սպառազինություն, հրթիռներ և փոխկապված ծառայություններ: Կարելի է պնդել, որ ռազմական ոլորտի *նեղ* սահմանումն ընդգրկում է նաև “երկակի օգտագործման” տեխնոլոգիաների գնումը, այսինքն՝ այն տեխնոլոգիաների, որոնք կարող են, ըստ էության, օգտագործվել, և՛ ռազմական, և՛ ոչ ռազմական նպատակներով՝ պայմանով, որ ձեռքբերումն առաջնահերթ իրականացվել էր ռազմական ոլորտում օգտագործման համար և որ այս “երկակի օգտագործման” տեխնոլոգիաների մասնագրերը որոշակի փոփոխությունների են ենթարկվել՝ ռազմական պահանջները բավարարելու նպատակով:

Ռազմական ոլորտի գնումների՝ *նեղ* և *լայն* առումներով սահմանումների միջև տարբերությունն արտացոլում է այն փաստը, որ ռազմական ոլորտում գնումների որոշ

գործողություններ ավելի սերտ կապված են այն հիմքի հետ, որը կարելի է անվանել ազգային պաշտպանություն և ազգային անվտանգություն, և հաճախ նկարագրվում են համապատասխան տեխնոլոգիաների բարդ բնույթով (այսինքն՝ ռազմական ոլորտի գնումների նեղ սահմանման դեպքը), այնինչ գնումների այլ գործողություններ միևնույն ոլորտում, ըստ էության, հստակորեն ավելի քիչ զգայուն են (ոչ ռազմական սարքավորումների և ծառայությունների գնում): Այս տարբերությունը հետագայում ընդգծում է այն փաստը, որ ավելի զգայուն գնումները պետք է ենթակա լինեն այնպիսի կարգավորիչ ռեժիմի, որն ընդունում է դրա առանձնահատկությունները և փորձում է հավասարակշռություն պահել մի կողմից գնումների բաց և թափանցիկ գործընթացի, մյուս կողմից՝ գնորդ երկրի անվտանգության հիմնական հարցերի պաշտպանության միջև:

Այս կարճ գրությունը կենտրոնանում է ռազմական ոլորտի նյութերի գնման վրա, որոնք իրենց բնույթի և նախատեսված օգտագործման պատճառով, սերտորեն կապված են պաշտպանության և անվտանգության հասկացությունների հետ: Այլ խոսքերով, այն գործ ունի *նեղ առումով սահմանված* ռազմական ոլորտի գնումների հետ: Գնումների վերաբերյալ այս կարճ գրության մնացած մասում “ռազմական ոլորտի գնումներ” հասկացությունն արտացոլում է այս նեղ սահմանումը:

Ռազմական ոլորտի գնումների առանձնահատուկ հատկանիշները

Իր բնույթով ռազմական ոլորտի գնումն ունի որոշ տարբերակիչ հատկանիշներ:

Նախ և առաջ, այն տարբերվում է ընդհանուր պետական գնումներից որակական առումով՝ այն փաստով, որ գործ ունի ռազմական ոլորտի գնումների հիմնական նպատակի հետ. ազգային անվտանգության և ռազմական հզորության պաշտպանությունը:

Երկրորդ, ռազմական ոլորտի սարքավորումներն ավելի հաճախ լինում են բարդ տեխնոլոգիաների համակցություններ:

Ռազմավարական և անվտանգության այս պահանջների և առարկայի բարդության պատճառով, աշխարհի շատ երկրներ ներկայացրել են ռազմական ոլորտի գնումների տարբերակված օրենսդրություն, որը շեղվում է բաց լինելու և թափանցիկության ընդհանուր չափանիշներից, որոնք հիմնականում պահանջվում են պետական գնումներում:

Բաց լինելու և թափանցիկության ընդհանուր չափանիշներից ռազմական ոլորտի գնումների օրենսդրության շեղման աստիճանը տարբեր է՝ տարածքային ենթակայության հետ կապված, բայց պետական պատվիրատուի համար միշտ ներառում է սովորականից ավելի մեծ հայեցողության աստիճան:

Դժբախտաբար, գաղտնիության և նվազեցված թափանցիկության այս միջավայրը՝ պետական պատվիրատուի համար հայեցողության սովորականից ավելի լայն դաշտի հետ մեկտեղ, դառնում է պարարտ հող հովանավորչության, կաշառակերության և պետական ռեսուրսների անարդյունավետ օգտագործման համար:

Ռազմական ոլորտի գնումները Եվրոպական Միությունում

Ռազմական ոլորտի գնումները կազմում են ԵՄ պետական գնումների զգալի հատվածը: Ռազմական ոլորտի ամբողջ ծախսերը ԵՄ 27 անդամ երկրներում մոտավորապես 200 միլիարդ եվրո է: Այս թիվը ներառում է մոտավորապես 90 միլիարդ եվրո ընդհանուր գնումների համար (հիմնականում՝ ձեռքբերում, գործարկում և պահպանություն) և մոտավորապես 90 միլիարդ եվրո՝ մասնավորապես ռազմական ոլորտի նոր սարքավորումների ձեռքբերման համար:

Չնայած ԵՄ անդամ երկրների կողմից ռազմական ոլորտին զգալի ռեսուրսների հատկացմանը՝ ռազմական ոլորտի գնումների պայմանագրերը տարիներ շարունակ ենթարկվել են տարբեր ազգային ռեժիմների՝ տարբեր կանոններով և ընթացակարգերով: Ազգային սահմանների շրջանակներում այս տարբերությունները ետ էին պահում և նույնիսկ կանխում էին (իրավաբանորեն և փաստացի) միջսահմանային մրցակցությունը: Որպես արդյունք՝ մինչև այժմ երբեք գոյություն չի ունեցել ռազմական ոլորտի գնումների իրական համաեվրոպական շուկա, այլ 27 ազգային շուկաներ, որոնք արտացոլում էին մուտք գործելու կարգավորիչ խոչընդոտները՝ ուղղված ազգային ռազմական արդյունաբերությունները պաշտպանելուն:

Ռազմական ոլորտի գնումների համաեվրոպական շուկայի մասնատումը ազգային սահմաններով և ազգային արտադրության հովանավորչական քաղաքականությունը ենթադրվում էր, որ թույլատրված է Եվրոպական Միության Գործարկման Պայմանագրի (“ԵՄԳՊ”) 346 Հոդվածով (սխալ, ինչպես բացատրված է ստորև): Ըստ էության, ԵՄՊԳ 346 Հոդվածի այս սխալ մեկնաբանությունը այնքան տարածված էր, որ հաճախ ռազմական ոլորտի նույնիսկ պաշտպանական նշանակություն չունեցող գնումները, օրինակ, զրենական պիտույքները, մաքրման ծառայությունները, սննդի մատակարարումը, սխալմամբ բացառվում էին ԵՄ պետական գնումների նորմերից: Այստեղ կարևոր է նշել, որ ռազմական ոլորտում ոչ ռազմական սարքավորումների կամ ծառայությունների գնման պայմանագրերը **միշտ ընդգրկվել են 2004/18/ԵՀ Հրահանգում՝** Հանրային ոլորտի Հրահանգ:

Ընդհանուր Անվտանգության և Պաշտպանության Քաղաքականության (ԸԱՊՔ) առաջացումը, ինչը նպատակ ուներ ԵՄ-ն դարձնել պաշտպանության և անվտանգության ոլորտի համաշխարհային դերակատար, պահանջում է Եվրոպական ռազմական արդյունաբերության

մրցակցային և դինամիկ հիմք: Ազգային սահմաններով մասնատվածությունը և ազգային հովանավորչական քաղաքականությունը, բյուջետային սահմանափակումների համակցությամբ, ստեղծում են ռեսուրսների անարդյունավետություն և կրկնություն, ինչը վնասում է մրցունակությանը և, ի վերջո, կարող է խախտել ԸԱՊՔ հեղինակությունը:

Այս պատճառով, Եվրոպական Պառլամենտը առաջարկել է Եվրոպական Հանձնաժողովին՝ կոնկրետ առաջարկություններ անել ռազմական ոլորտի արդյունաբերությունների, շուկաների և գնումների համար: Այս գործընթացի ամենաառարկայական արդյունքը 2009/81/ԵՀ Հրահանգի ուժի մեջ դնելն էր (“Պաշտպանության և անվտանգության Հրահանգ”), որը նպատակ ունի, ի թիվս այլոց, բացել ռազմական ոլորտի ազգային գնումները միջմիութենական մրցակցության համար և այսպիսով ստեղծել ռազմական ոլորտի իրական համաեվրոպական շուկա:

Կարգավորիչ շրջանակ. ԵՄ Առաջնային Օրենսդրություն

- Ընդհանուր կանոններ և սկզբունքներ

Իրավական տեսանկյունից, ռազմական ոլորտի գնումները ներքին շուկայի անբաժանելի մասն են կազմում և որպես այդպիսին, ենթակա են Եվրոպական Պայմանագրերում ամրագրված ընդհանուր կանոններին: Մասնավորապես, ռազմական ոլորտի գնումները ենթակա են հետևյալ հիմնարար կանոններին ու սկզբունքներին.

- ազգության հիման վրա խտրականության արգելք,
- ապրանքների ազատ շրջանառություն,
- ծառայությունների մատուցման ազատությունը,
- հիմնադրման ազատությունը:

Ի հավելումն, այն ենթակա է իրավունքի ընդհանուր սկզբունքների կիրառմանը, որոնք ճանաչվել են ԵՄ Արդարադատության Դատարանի կողմից (“ԵՄԱԴ”): Այս սկզբունքները ներառում են.

- հավասար վերաբերմունք,
- փոխադարձ ճանաչում,
- թափանցիկություն,
- համամասնություն,

Կարևոր է նշել, որ այս կանոնները և սկզբունքները կիրառվում են գնումների պայմանագրերի շնորհման նկատմամբ, նույնիսկ եթե այս պայմանագրերը դուրս են գնումների զանազան

Հրահանգների կիրառման ոլորտից (հանրային ոլորտ, կոմունալ ծառայություններ և պաշտպանություն ու անվտանգություն): Օրինակ, դրանք կիրառվում են գնումների պայմանագրերի նկատմամբ, որոնց արժեքը ցածր է գնումների համապատասխան շեմից (բացառությամբ գնումների շատ փոքր արժեք ունեցող պայմանագրերի, որոնք միջսահմանային հետաքրքրություն չեն ներկայացնում) կամ ծառայությունների կոնցեսիաների նկատմամբ (որոնք հանրային ոլորտի դեպքում բացառված են Հանրային ոլորտի 2004/18/ԵՀ Հրահանգի կիրառման ոլորտից): Մա նշանակում է, որ այս կանոնները և սկզբունքները կիրառվում էին ռազմական ոլորտի գնումների պայմանագրերի նկատմամբ, նույնիսկ մինչև Պաշտպանության և Անվտանգության Հրահանգի ուժի մեջ մտնելը:

- **ԵՄԳՊ Հոդված 346-ի Անվտանգության բացառությունը**

ԵՄԳՊ 346-րդ Հոդվածը սահմանում է, որ անդամ երկրները կարող են վերապահումներ անել ԵՄ իրավունքի կանոններից և սկզբունքներից և ընդունել արտակարգ միջոցներ սպառազինության և պատերազմական այլ նյութերի առևտրի և արտադրության ոլորտում, եթե այս միջոցներն անհրաժեշտ են իրենց *անվտանգության էական* շահերը պաշտպանելու համար: Ի հավելումն, այս միջոցները պետք է բացասաբար չազդեն ռազմական ոլորտի հետ չկապված արտադրանքի միջմիութենական առևտրի վրա:

Ինչպես նշվել է վերևում, այս դրույթները սխալ են մեկնաբանվել անդամ երկրների մեծամասնության կողմից, որպես ԵՄ իրավունքի կանոններից և սկզբունքներից ռազմական ոլորտի գնումների ամբողջական, ինքնաբերաբար բացառում սահմանող: ԵՄԱԴ բերված մի շարք գործեր հստակորեն ցուցադրել են, որ այս դրույթի նման լայն մեկնաբանությունը անօրինական է:

2006 թվականի դեկտեմբերին Եվրոպական Հանձնաժողովը հրապարակեց մեկնաբանական Հաղորդագրություն (COM (2006) 779 վերջնական, Պայմանագրի Հոդված 296-ի կիրառման մեկնաբանական հաղորդագրություն Ռազմական ոլորտի գնումների ոլորտում), որտեղ այն շարադրում է իր կարծիքը ԵՄԳՊ Հոդված 346-ի պատշաճ մեկնաբանման վերաբերյալ: Չնայած այս մեկնաբանական հաղորդագրությունը իրավաբանորեն պարտադիր չէ, այն կարևոր է, քանի որ բացատրում է, թե ինչպես Հանձնաժողովը կկատարի իր դերը որպես ԵՄ իրավունքի հսկման մարմին, երբ բախվի ռազմական ոլորտի գնումների ազգային միջոցների հետ, որոնք ամենայն հավանականությամբ հակասում են ԵՄ իրավունքին:

Մեկնաբանական հաղորդագրության համաձայն, երբ անդամ երկրներն ընտրում են ռազմական ոլորտում վերապահում անել գնումների ոլորտի ԵՄ կանոններից, նրանք կարող են այդպես վարվել միայն կոնկրետ այդ դեպքում և վկայակոչելով ԵՄԳՊ 346 Հոդվածը: Այլ խոսքերով, ԵՄ անդամ երկրները չեն կարող ընդհանուր առմամբ բացառել ռազմական

ուրրտի գնումները ԵՄ իրավունքի կիրառման ոլորտից: Ի հավելումն, երբ վկայակոչվում է այս հոդվածը, անդամ երկրները պետք է ցույց տան, որ այս դրույթի կիրառման պայմանները բավարարված են: Մասնավորապես, անդամ երկրները պետք է ցույց տան, որ.

- ազգային միջոցներն ընդգրկում են ռազմական ոլորտի ապրանքներ, որոնք ներառված են Խորհրդի կողմից 1958 թ-ին մշակված ցուցակում,
- դրանք վերաբերելի են և կենսական՝ անվտանգության շահերի առումով,
- ազգային արտակարգ միջոցներն անհրաժեշտ են անվտանգության կենսական շահերի պաշտպանության համար:

Այսինքն, Պաշտպանության և Անվտանգության Հրահանգի ուժի մեջ մտնելուց հետո անդամ երկիրը պետք է ցուցադրի, թե ինչու Պաշտպանության և Անվտանգության Հրահանգի նոր, “ճիշտ մշակված” կանոնները պատշաճ կերպով չեն պաշտպանում իր անվտանգության էական շահերը:

Չնայած անդամ երկրի հայեցողության ճշգրիտ աստիճանը անվտանգության էական շահերի պաշտպանության և վերապահումների միջև կապի սահմանման մեջ դեռևս պետք է հստակեցվի ԵՄԱԴ-ի կողմից, Եվրոպական Հանձնաժողովը վերջերս ցույց է տվել իր պատրաստակամությունը՝ ընդունել ավելի ակտիվ դիրք (տե՛ս, օրինակ, Հունաստանի և Չեխիայի Հանրապետության դեմ սկսված հետաքննությունն այն պատճառով, որ նրանք համապատասխան կերպով չէին արդարացրել ԵՄԳՊ 346 Հոդվածի օգտագործումը ռազմական ոլորտի գնումների շնորհման երկու գործընթացների համատեքստում):

Կարգավորիչ շրջանակ. ԵՄ երկրորդային օրենսդրություն-Պաշտպանության և Անվտանգության Հրահանգ

Պաշտպանության և Անվտանգության Հրահանգը¹ ուժի մեջ է մտել 2009 թվականի օգոստոսի 21-ին: Կիրարկման ժամանակաշրջանը, որի ավարտին անդամ երկրները պետք է փոխատեղեին Պաշտպանության և Անվտանգության Հրահանգն իրենց ազգային օրենսդրության մեջ, ավարտվել է 2011 թվականի օգոստոսի 21-ին: Նոր գործիքը կազմում է Միության օրենսդրական համակարգի մաս, և հետևաբար, վերաբերում է նաև ԵՄ անդամակցող (հնարավոր) թեկնածուներին:

¹ Եվրոպական Պառլամենտի և Խորհրդի 2009 թվ.-ի հուլիսի 13-ի ռազմական և պաշտպանության ոլորտում պետական պատվիրատուի կամ կազմակերպությունների կողմից որոշակի աշխատանքների կատարման, մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի շնորհման ընթացակարգերի համակարգման վերաբերյալ 2009/81/ԵՀ Հրահանգը և փոփոխվող 2004/17/ԵՀ և 2004/18/ԵՀ Հրահանգները

Պաշտպանության և Անվտանգության Հրահանգը նախատեսում է կարգավորիչ շրջանակ, որը ճկուն է և հաշվի է առնում ռազմական ոլորտի գնումների յուրահատուկ հատկանիշները: Նոր գործիքի նպատակը ռազմական ոլորտի ազգային գնումների շուկայի բացումն է միջսահմանային մրցակցության համար՝ նվազեցնելով անդամ երկրների կողմից ԵՄԳՊ 346 Հոդվածի չարդարացված վկայակոչման դեպքերը: ԵՄԳՊ 346 Հոդվածը մնում է անփոփոխ: Այնուամենայնիվ, ինչպես նշված է վերևում, անդամ երկրներն այսուհետև պետք է ավելի հստակորեն արդարացնեն, թե ինչու է ԵՄ իրավունքից վերապահումն անհրաժեշտ իրենց անվտանգության էական շահերի պաշտպանության համար, քանի որ Պաշտպանության և Անվտանգության Հրահանգը նախատեսված է հատկապես ռազմական ոլորտի գնումների յուրահատկություններին և զգայուն բնույթին արձագանքելու համար:

- **Կիրառման ոլորտը և կիրառելի շեմերը**

Ըստ էության, Պաշտպանության և Անվտանգության Հրահանգն ընդգրկում է երկու մեծ ոլորտ.

- Ռազմական սարքավորումներ, դրանց հետ կապակցված ծառայությունների մատուցման և աշխատանքերի կատարման պայմանագրեր,

-Անվտանգության նպատակներով (ոչ միայն պաշտպանության կամ ազգային անվտանգության) զգայուն գնումներ կամ գնումներ, որոնք ներառում են գաղտնի տեղեկատվություն:

Կարևոր է նշել, որ մինչև Պաշտպանության և Անվտանգության Հրահանգի ուժի մեջ մտնելը, զգայուն (բայց ոչ ռազմական) սարքավորումների կամ ծառայությունների գնումը, ըստ էության, ընկնում էր գնումների այլ Հրահանգների կիրառման տակ (հանրային ոլորտի կամ կոմունալ ծառայությունների մատուցման ոլորտի Հրահանգ): Մա նշանակում է, որ պետական պատվիրատուի համար կարևոր է տեղյակ լինել Պաշտպանության և Անվտանգության Հրահանգի կիրառման կոնկրետ ոլորտից՝ գնումների այն պայմանագրերի հետ կապված, որոնք նախկինում կարգավորվում էին պետական գնումների այլ Հրահանգներով:

Պաշտպանության և Անվտանգության Հրահանգի իրավակիրառ շրջանակի այս լայն սահմանման շարժառիթը երկակի է. մի կողմից ժամանակակից տեխնոլոգիաները ռազմական ոլորտի և քաղաքացիական ոլորտի տեխնոլոգիաների միջև սահմանազատումը դարձնում են ավելի ու ավելի դժվար (հաճախ որոշիչ գործոն է առանձին տեխնոլոգիաների օգտագործումը, ոչ թե տեխնոլոգիայի բնույթը): Մյուս կողմից, ներքին անվտանգության և արտաքին անվտանգության միջև սահմանազատումն ավելի դժվար է: Օրինակ,

անվտանգության սարքավորումների և ծառայությունների գնումը քաղաքացիական օդանավակայանի կողմից այս օրերում բարձրացնում է անվտանգության հետ կապված հացեր, որոնք համեմատելի են ավանդական ռազմական ոլորտի գնումներին: Այս պատճառով գնումների առանձնահատուկ, ճկուն ռեժիմն ընդգրկում է նաև անվտանգության այս գնումների պայմանագրերը:

Ինչպես գնումների այլ Հրահանգներում, համապատասխան պայմանագրերի արժեքը պետք է բարձր լինի որոշակի շեմից, որպեսզի կիրառվի Պաշտպանության և Անվտանգության Հրահանգը: Ներկայումս կիրառելի շեմերը հետևյալն են.

- 412 000 եվրո ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի համար,
- 5 150 000 եվրո աշխատանքների կատարման պայմանագրերի համար:

Ավելին, ինչպես պետական գնումների այլ Հրահանգների դեպքում, այս շեմերը ևս պետք է պարբերաբար թարմացվեն: Տե՛ս *Գնումների մասին կարճ գրություն 5- Շեմերի ընկալումը՝* հետագա տեղեկատվության համար:

Պայմանագրերը, որոնց արժեքը ցածր է այս շեմերից, չեն ընդգրկվում Պաշտպանության և Անվտանգության Հրահանգում: Այնուամենայնիվ, եթե հավանական է, որ նրանք իրենցից կներկայացնեն միջսահմանային հետաքրքրություն, այս պայմանագրերի նկատմամբ կկիրառվեն ԵՄ ընդհանուր նորմերն ու սկզբունքները, օրինակ, ոչ խտրականության և թափանցիկության սկզբունքները: Տե՛ս *Գնումների մասին կարճ գրություն 15-Շեմից ցածր պայմանագրեր՝* շեմից ցածր պայմանագրերի նկատմամբ կիրառվող ընդհանուր կանոնների և սկզբունքների վերաբերյալ տեղեկատվության համար:

- **Գնումների ընթացակարգերը**

Պաշտպանության և Անվտանգության Հրահանգի հավանաբար ամենազգալի նորարարությունն այն է, որ ռազմական ոլորտի պետական պատվիրատուներն ազատ են ընտրել *նախնական հրապարակմամբ բանակցային ընթացակարգը* (սահմանափակ ընթացակարգի հետ մեկտեղ), որպես գնումների ստանդարտ ընթացակարգ: Սա պետական պատվիրատուի համար նախատեսում է ավելի մեծ ճկունություն և ավելի շատ ազատություն՝ հնարավոր լուծումները մասնակցի հետ քննարկելու համար: Պետք է հիշել, որ Եվրոպական Օրենսդիրն ընտրել է համանման մոտեցում Կոմունալ Ծառայությունների Հրահանգի, բայց ոչ պետական ոլորտի Հրահանգի համար:

Ի հավելումն, պետական պատվիրատուները կարող են կիրառել մրցակցային երկխոսության և առանց հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը՝

հատուկ հիմքերի առկայության դեպքում: Մրցակցային երկխոսության ընթացակարգի կիրառման հիմքերը նույնն են, ինչ որ Հանրային Ոլորտի Հրահանգում:

Առանց հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի կիրառման հիմքերը ներառում են երկու հավելյալ հանգամանք, որոնք իրենց համարժեքը չունեն հանրային ոլորտի հրահանգում:

Առաջին հիմքը վերաբերում է գնումների այն պայմանագրերին, որոնք գործ ունեն արտասահմանում տեղակայված (կամ տեղակայվելիք) ռազմական կամ անվտանգության ուժերին օդային և ծովային փոխադրման ծառայությունների տրամադրման հետ, երբ պետական պատվիրատուն պետք է գնի այս ծառայությունները այն մասնակցներից, որոնք երաշխավորում են իրենց հայտերի վավերությունը այնքան կարճ ժամկետների համար, որ սահմանափակ ընթացակարգը կամ հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգը (ներառյալ՝ կարճեցված ժամկետներով դրանց տարբերակները) չեն կարող կիրառվել:

Երկրորդ հիմքը վերաբերում է ճգնաժամից բխող ծայրահեղ անհրաժեշտությանը: Նման դեպքերում, առանց հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը կարող է կիրառվել, եթե սահմանափակ ընթացակարգին կամ հայտարարությունը հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգին հետևելը (նույնիսկ կարճեցված ժամկետներով) անհամատեղելի կլիներ ճգնաժամի անհետաձգելիությանը:

Տե՛ս [Գնումների մասին կարճ գրություն 10- Որո՞նք են պետական գնումների ընթացակարգերը և ե՞րբ կարող են դրանք օգտագործվել](#)՝ վերը նշված ընթացակարգերի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվության համար:

- [Տեղեկատվության գաղտնիությունը](#)

Պաշտպանության և Անվտանգության Հրահանգի մեկ այլ կարևոր նորարարությունը տեղեկատվության գաղտնիության հետ կապված հատուկ դրույթի ներառումն է: Ռազմական և անվտանգության ոլորտի պայմանագրերի առարկայի զգայուն բնույթի պատճառով գաղտնի տեղեկատվության հետ վարվելու կարգը շատ կարևոր է: Պաշտպանության և Անվտանգության Հրահանգը ներառում է առանձնահատուկ դրույթներ, որոնք փորձում են կարգավորել այս հարցը: Օրինակ, պետական պատվիրատուն կարող է մասնակցից պահանջել հետևյալը.

- Մասնակցի և արդեն բացահայտված ենթակապալառուի կողմից պարտավորության ստանձնումը՝ պատշաճ կերպով պահպանել իրենց տիրապետման տակ եղած կամ իրենց հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիությունը՝ համաձայն համապատասխան անդամ երկրի՝ գաղտնի տեղեկատվության հրապարակման թույլտվության մասին դրույթների:
- Մասնակցի կողմից պարտավորության ստանձնումը՝ ձեռք բերել վերը նշված պարտավորության ստանձնումը այլ ենթակապալառուից, որի հետ ինքը կկնքի ենթակապալի պայմանագիր՝ պայմանագրի գործողության ընթացքում:
- Արդեն բացահայտված ենթակապալառուների մասին բավարար տեղեկատվություն՝ թույլատրելու պետական պատվիրատուին որոշել, որ նրանցից յուրաքանչյուրը տիրապետում է այն ունակություններին, որոնք պահանջվում են պատշաճ կերպով այն տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու համար, որը նրանց հասանելի է եղել, կամ որը նրանցից պահանջվում է ստանալ ենթակապալառուի իրենց պարտականությունները կատարելիս, և
- Մասնակցի կողմից պարտավորության ստանձնում՝ տրամադրել վերը նշված տեղեկությունները այլ ենթակապալառուների մասին, որոնց հետ այն ենթակապալի պայմանագիր կկնքի պայմանագրի գործողության ընթացքում:

Այստեղ կարևոր է նշել, որ անդամ երկրները պետք է ճանաչեն այլ անդամ երկրների տրամադրած գաղտնի տեղեկատվության հրապարակման թույլտվության համարժեքները: Նման համարժեքի գոյության մասին որոշումը պետք է ընդունի գնում կատարող անդամ երկիրը:

- **Մատակարարման գաղտնիություն**

Ռազմական և անվտանգության ոլորտի գնումների համատեքստում մատակարարման գաղտնիությունը հիմնարար նշանակություն ունի: Անդամ երկրները հաճախ փորձում են հենց այս հիմքով արդարացնել ԵՄ գնումների կանոններից շեղումները: Ըստ էության, մատակարարման գաղտնիության վերաբերյալ հատուկ դրույթի բացակայությունը այն հանգամանքներից մեկն էր, որի պատճառով հանրային ոլորտի հրահանգները համարվեցին անհամապատասխան ռազմական ոլորտի գնումների պայմանագրերի համար:

Պաշտպանության և Անվտանգության Հրահանգը ներառում է հատուկ դրույթներ, որոնք փորձում են պատասխանել անդամ երկրների հարցերին: Մասնավորապես, Պաշտպանության և Անվտանգության Հրահանգը նախատեսում է, որ պետական պատվիրատուն պետք է պայմանագրի փաստաթղթերի մեջ մասնավորեցնի

մատակարարման գաղտնիության ցանկացած պահանջ և կարող է պահանջել մասնակցից հետևյալը.

- Փաստաթղթեր կամ հավաստագրեր, որոնք ցույց են տալիս (պետական պատվիրատուի համար ընդունելի ձևով), որ մասնակիցը կկարողանա կատարել պայմանագրի հետ կապված ապրանքների արտահանմանը, փոխանցմանը և տրանզիտին վերաբերող իր պարտականությունները,
- Պետական պատվիրատուի համար ցանկացած սահմանափակման մասին նշում, որը կվերաբերի ծառայությունների կամ արտադրանքի կամ այս արտադրանքի կամ ծառայությունների ցանկացած արդյունքի բացահայտմանը, փոխանցմանը կամ օգտագործմանը, ինչը կարող է առաջանալ արտահանման նկատմամբ հսկողությունից կամ անվտանգության ապահովման միջոցառումներից,
- Փաստաթղթեր կամ հավաստագրեր, որոնք ցույց են տալիս, որ կազմակերպությունը և մասնակցի մատակարարման ցանցի տեղադրությունը թույլ կտան իրեն համապատասխանել մատակարարման գաղտնիության վերաբերյալ պետական պատվիրատուի/կազմակերպության պահանջներին և պարտավորություն ստանձնել՝ ապահովելու, որ պայմանագրի գործողության ընթացքում իր մատակարարման ցանցում հնարավոր փոփոխությունները բացասաբար չեն անդրադառնա այս պահանջներին համապատասխանելու վրա,
- Մասնակցի կողմից պարտավորության ստանձնում, որ այն կստեղծի և/կամ կպահպանի հզորությունը, որն անհրաժեշտ է պետական պատվիրատուի՝ ճգնաժամի արդյունք հանդիսացող լրացուցիչ կարիքների բավարարման համար և մասնակցի ազգային իշխանություններից ստացված ցանկացած օժանդակ փաստաթղթեր՝ պետական պատվիրատուի՝ ճգնաժամի արդյունք հանդիսացող լրացուցիչ կարիքների բավարարման վերաբերյալ,
- Մասնակցի կողմից պարտավորության ստանձնում՝ իրականացնելու պայմանագրում ընդգրկված մատակարարման պահպանում, արդիականացում և հարմարեցում,
- Մասնակցի կողմից պարտավորության ստանձնում՝ պատշաճ ժամանակին տեղեկացնելու պետական պատվիրատուին իր կազմակերպական ձևի, մատակարարման ցանցի, արդյունաբերական ռազմավարության մեջ տեղի ունեցած ցանկացած փոփոխության մասին, որը կարող է ազդել այդ պատվիրատուի նկատմամբ իր պարտավորությունների վրա,
- Մասնակցի կողմից պարտավորության ստանձնում՝ համաձայնեցման ենթակա պայմանների համաձայն՝ պետական պատվիրատուին տրամադրել հատուկ միջոցներ, որոնք անհրաժեշտ են պահեստամասերի, առանձնամասերի,

առանձնամասերի համակցության և փորձարկման հատուկ սարքավորումների արտադրության համար, ներառյալ՝ տեխնիկական գծանկարները, լիցենզիաները և օգտագործման ուղեցույցերը, այն դեպքում, եթե ինքն այլևս ունակ չէ իրականացնել դրանց մատակարարումը:

Արժանի է հիշատակել, որ պետական պատվիրատուն չի կարող պարտավորեցնել մասնակցին՝ անդամ երկրից պարտավորություն ձեռք բերել, որ վերջինս գերծ կմնա արտահանման, տեղափոխման կամ տրանզիտի իր ազգային չափորոշիչները կիրառելուց՝ պայմանով, որ դրանք համապատասխանում են միջազգային կամ Միության իրավունքին:

- **Իրավունքի պաշտպանության միջոցներ**

Պաշտպանության և Անվտանգության Հրահանգի մեկ այլ կարևոր հատկանիշն այն է, որ ի հավելումն նյութական դրույթների, այն նաև ներառում է իրավունքի պաշտպանության վերաբերյալ հատուկ դրույթներ: Իրավունքների պաշտպանության միջոցների վերաբերյալ դրույթները համապատասխանում են Իրավունքի Պաշտպանության մասին Հրահանգի դրույթներին (89/665/ԵՀ Հրահանգ, փոփոխված 2007/66/ԵՀ Հրահանգով): Տե՛ս *Գնումների մասին կարճ գրություն 12 - Իրավունքի պաշտպանության միջոցներ*՝ իրավունքի պաշտպանության միջոցների հրահանգի պահանջների վերաբերյալ տեղեկատվության համար:

Գոյություն ունեն որոշ շեղումներ, որոնք համապատասխանում են ռազմական և անվտանգության ոլորտի գնումների առանձնահատկություններին: Օրինակ, պայմանագրի անվավերությունը կարող է հնարավոր չլինել, եթե այս անվավերության հետևանքները կվտանգեն ռազմական և անվտանգության ոլորտի ավելի լայն պայմանագիրը:

Ռազմական և անվտանգության ոլորտի գնումների առանձնահատուկ բնույթին համապատասխան՝ անդամ երկրները նաև ազատ են ստեղծել հատուկ մարմին, որի միակ իրավասությունը ռազմական և անվտանգության գնումների դեպքերի վերանայումն է՝ պայմանով, որ այն պահպանում է դատական վերանայման պատշաճ գործընթացի երաշխիքները և որ գնման համապատասխան որոշումը վերջնականապես պետք է վերանայվի ԵՄ իրավունքի իմաստով դատարան կամ տրիբունալ համարվող մարմնի կողմից (մասնավորապես՝ այնպիսի մարմնի կողմից, որը կարող է նախնական հարցեր հղել ԵՄԱԴ-ին):

Այլ հարցեր.

- **Փոխադարձ գործողություններ**

Փոխադարձ գործողությունները ռազմական ոլորտի պետական պատվիրատուի իրականացրած գործունեության տեսակ են, որոնք նպատակ ունեն երաշխավորել իրենց ազգային արտադրությանը դրա “ներդրումների”, այսինքն՝ ռազմական ոլորտի սարքավորումների կամ հարակից ծառայությունների ձեռքբերման համար ռազմական ոլորտի օտարերկրյա կապալառուին տրված վճարների որոշակի ետ վերադարձ: Օրինակ, փոխադարձ գործողությունները կարող են ստանալ ռազմական ոլորտի պայմանագրի արտադրական փուլին գնորդ երկրի ռազմական արտադրության մասնակցության տեսք՝ համատեղ արտադրության կամ ենթակապալի միջոցով, կամ օտարերկրյա մատակարարի ապագա պայմանագրերին ազգային արտադրության ներգրավումը որպես ենթակապալառու: Փոխադարձ գործողությունները կարող են ի հայտ գալ որպես որոշակի գնման գործընթացի օտարերկրյա կապալառուի մասնակցության պայման կամ շնորհման չափորոշիչ: Փոխադարձ գործողությունները կազմում են ռազմական ոլորտի փոքր կամ միջին չափերի արտադրություն ունեցող երկրների ռազմական ոլորտի գնումների ռեժիմների ընդհանուր հատկանիշը:

Պաշտպանության և Անվտանգության Հրահանգը հստակորեն չի կարգավորում փոխադարձ գործողությունների կարևոր հարցը: Այնուամենայնիվ, Եվրոպական Հանձնաժողովի դիրքորոշումը, ինչպես արտահայտված է Մեկնաբանական Հաղորդակցման Հոդված 296-ում ԵՀ (այժմ՝ ԵՄԳՊ Հոդված 346) և Փոխադարձ Գործողությունների մասին Ուղեցուցային Գրության մեջ, այն է, որ փոխադարձ գործողություններն իրենց բնույթով խտրական են, քանի որ նպատակ ունեն նպաստել գնորդ երկրի ազգային արտադրությանը: Սա նշանակում է, որ փոխադարձ գործողությունները սկզբունքորեն հակասում են ԵՄ իրավունքին:

Այնուամենայնիվ, որոշ փոխադարձ գործողություններ կարող են արդարացվել ԵՄ Պայմանագրերում առկա բացառություններից մեկի հիման վրա: Ամենահամապատասխանը, իհարկե, ԵՄԳՊ 346 Հոդվածն է: Այլ խոսքերով, անդամ երկրները կարող են արդարացնել որոշակի փոխադարձ գործողություններ, եթե դրանք համապատասխանում են ԵՄԳՊ Հոդված 346-ի պայմաններին, ինչպես քննարկված է վերևում: Այստեղ կարևոր է նշել, որ Եվրոպական Հանձնաժողովը գտնում է, որ շատ դժվար կլինի արդարացնել, այսպես կոչված, ոչ ռազմական փոխադարձ գործողությունները, այսինքն՝ օտարերկրյա կապալառուին պարտադրված փոխադարձ գործողությունները, որոնք կապված չեն ռազմական ոլորտի հետ: Օրինակ, եթե ռազմական ոլորտի օտարերկրյա կապալառուին պարտավորեցնում են գնող երկրի արտադրությունից գնել որոշակի քանակի պատճենահանող սարքեր՝ ԵՄԳՊ Հոդված 346-ի հիման վրա, քանի որ դա բացահայտ կապ չունի գնող Անդամ երկրի անվտանգության էական հարցերի հետ:

Եվրոպական Պաշտպանության Գործակալության (ԵՊԳ) վերջին նախաձեռնությունը՝ Փոխադարձ Գործողությունների իրականացման Կարգը (որն ուժի մեջ է մտել 2009 թվականի Հուլիսի 1-ին), փորձում է նվազեցնել փոխադարձ գործողությունների բացասական ազդեցությունը:

Ինչպես նշված է վերևում, Պաշտպանության և Անվտանգության Հրահանգը չի ընդգրկում դրույթներ փոխադարձ գործողությունների մասին: Այնուամենայնիվ, այն ներառում է մի շարք դրույթներ “ենթակապալի” մասին, որոնք նպատակ ունեն հասցեագրել հարցերից մի քանիսը, որոնք ստիպում են անդամ երկրներին ընդունել փոխադարձ գործողություններ, օրինակ, փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ների) պաշտպանությունը, սակայն դա կատարում են այնպես, որ համապատասխանեն ԵՄ իրավունքին: Մասնավորապես, Պաշտպանության և Անվտանգության Հրահանգը թույլատրում է անդամ երկրներին պահանջել, որ սկզբնական պայմանադիր կողմը պայմանագրի մի մասը ենթակապալի պայմանագրով հանձնի երրորդ անձանց: Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ հնարավոր ենթակապալառուների միջև խտրականություն չպետք է դրվի ազգության հիման վրա: Սա է հիմնական տարբերությունը Պաշտպանության և Անվտանգության Հրահանգի “ենթակապալի” դրույթների և փոխադարձ գործողությունների միջև:

- **Զուգահեռ ռեժիմներ**

Ռազմական ոլորտի Գնումների վերաբերյալ ԵՊԳ Իրականացման կարգը

ԵՄ ռազմական ոլորտի գնումների ոլորտում մեկ այլ համապատասխան ռեժիմը Եվրոպական Պաշտպանության Գործակալության՝ Ռազմական Ոլորտի Գնումների Իրականացման Կարգն է (սկսված 2006 թվականի հուլիսի 1-ից):

Սա կամավոր, իրավաբանորեն ոչ պարտադիր, իրավաբանական սանկցիաներով չապահովված ռեժիմ է, որը կիրառվում է գնումների պայմանագրերի այն դեպքերում, երբ ԵՄԳՊ Հոդված 346-ի պայմանները բավարարվում են, այլ խոսքերով, Պաշտպանության և Անվտանգության Հրահանգում չընդգրկված դեպքերում:

Իրականացման Կարգը կիրառելի է ռազմական, բայց ոչ անվտանգության ոլորտի գնումների պայմանագրերի նկատմամբ, որոնց արժեքը գերազանցում է 1 միլիոն եվրոն: Այս ռեժիմին ենթակա պայմանագրերը պետք է բավարարեն հրապարակման որոշ պահանջների, որոնք շատ ավելի բարդ են, քան Պաշտպանության և Անվտանգության Հրահանգում սահմանվածները: Մասնավորապես, պետական պատվիրատուներն ազատ են ընտրել գնումների ցանկացած ընթացակարգ՝ պայմանով, որ նրանք բավարարում են թափանցիկության, խտրականության արգելքի և հավասար վերաբերմունքի սկզբունքներին:

Այլ խոսքերով, ռեժիմն ունի այն նույն նպատակը, ինչ որ Պաշտպանության և Անվտանգության Հրահանգը, սակայն այն ընդգրկում է թվացյալ այլ ոլորտ (այսինքն՝ գնումների պայմանագրեր, որտեղ ԵՄԳՊ 346 Հոդվածի պայմանները բավարարված են) և պակաս ցուցումներ է պարունակում: Պայմանագրի հնարավորությունները պետք է հրապարակվեն կենտրոնական էլեկտրոնային պորտալում՝ հասանելի բոլորի համար:

Համարվում է, որ Պաշտպանության և Անվտանգության Հրահանգի ուժի մեջ մտնելուց հետո Իրականացման կարգի նշանակությունը կնվազի, քանի որ դրա նպատակն այն է, որ անդամ երկրներն ավելի քիչ անդրադառնան ԵՄԳՊ Հոդված 346-ին՝ Պաշտպանության և Անվտանգության Հրահանգի առանձնահատուկ բնույթը հաշվի առնելով:

Ռազմական ոլորտի գնումներ. ԵՄ-Երրորդ երկրներ

Ինչպես նշված է վերևում, Պաշտպանության և Անվտանգության Հրահանգն այժմ կազմում է Միության իրավական համակարգի մաս, ինչը նշանակում է, որ անդամակցման բոլոր ներկայիս և ապագա թեկնածուները պետք է փոխատեղեն այն իրենց ազգային օրենսդրության մեջ:

Պետական Գնումների Համաձայնագրի (ՊԳՀ) համաձայն ԵՄ և դրա անդամ երկրների կողմից երրորդ երկրների հանդեպ ստանձնած գոյություն ունեցող պարտավորությունների հետ կապված, կարելի է ասել, որ ՊԳՀ XXIII (1) Հոդվածը թույլատրում է Համաձայնագիրը կնքած ցանկացած Կողմի ձեռնարկել “...ցանկացած գործողություն...որն այն անհրաժեշտ է համարում զենքի, սպառազինության կամ պատերազմական նյութերի գնման կամ ազգային անվտանգության կամ ազգային պաշտպանության համար պարտադիր գնումների հետ կապված՝ անվտանգության իր էական շահերի պաշտպանության համար”: Ավելին, ՊՀԳ Լրացման Հավելված I –ի Մաս (3) հստակորեն ցույց է տալիս, որ ստորագրող Կողմերը ՊՀԳ կիրառման ոլորտից բացառել են ծանր տեխնիկայի գնումը: Սա նաև հստակորեն նշված է Պաշտպանության և Անվտանգության Հրահանգի Նախաբանի 18-րդ պարբերության մեջ:

Այստեղ պետք է նշել, որ ՊԳՀ XXIII (1) Հոդվածի շրջանակը ավելի լայն է, քան ԵՄԳՊ 346 Հոդվածի շրջանակը, քանի որ այն վերաբերում է ոչ միայն “զենքին, սպառազինությանը և պատերազմական նյութերին”, այլ նաև “ազգային անվտանգության համար պարտադիր գնումներին”: Սա նշանակում է, որ Անդամ երկրները կարող են վկայակոչել ՊԳՀ XXIII (1) Հոդվածը նաև ոչ ռազմական ոլորտի սարքավորումների զգայուն գնումների դեպքերում:

Հետագա ընթերցանություն.

Եվրոպական Հանձնաժողովի համացանցային էջ՝ Ռազմական ոլորտի գնումների վերաբերյալ, որը ներառում է մեկնաբանական հաղորդագրություններ և ուղեցուցային գրությունները, ներառյալ՝ գնումների վերաբերյալ այս կարճ գրության մեջ նշվածները.

http://ec.europa.eu/internal_market/publicprocurement/rules/defence_procurement/

Եվրոպական Պաշտպանության Գործակալության համացանցային էջը՝ գնումների վերաբերյալ այս կարճ գրության մեջ նշված Իրականացման կարգի համար.

<http://www.eda.europa.eu>